ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-4-Ը ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ (Ք. ԱՇԳԱԲԱԴ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Խաչիկ Սողոմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Թուրքմենստան, ք. Աշգաբադ, 2024թ. հոկտեմբերի 2-4-ը:

4. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողովի միջազգային գործընկերություն և Թուրքմենստանի Նախարարների կաբինետի ներքո Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գործակալություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու 2024թ. հոկտեմբերի 3-ին կայացած ԵՄ-Կենտրոնական Ասիա փոխկապակցվածության ներդրողների ֆորումի շրջանակներում ձևավորված Համակարգման պլատֆորմի բարձր մակարդակի հանդիպմանը (ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցություն ապահովելը, իր իրավասության սահմաններում միջազգային կազմակերպություններում Նախարարության շահերը ներկայացնելը):

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը քննարկվել են Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքին, դրա համակարգման հարթակին վերաբող հարցեր, ներակայացվել են միջանցքին հնարավոր մասնակից երկրների ենթակառուցվածքներին վերաբերող հարցեր: Ներկայացվել է նաև Խաղաղության խաչմերուկ ծրագիրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Թուրքմենստանի Նախարարների կաբինետի ներքո Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրեն Մամեթան Չակիևի հետ: Քննարկվել են Հայաստանի և Թուրքմենստանի միջև օդային հաղորդակցության հարցը, ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման համար երկու երկրների միջև փոխանակվող թույլտվությունների ավելացման հարցը, ինչպես նաև Հայաստանի տնտեսվարողների համար Թուրքմենստանի կողից ավելի ցածր սակագներ կիրառելու հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համակարգման պլատֆորմի բարձր մակարդակի հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրեն Մամեթան Չակիևի հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել ուսումնասիրել երկու երկրների միջև օդային հաղորդակցության և Թուրքմենստանի կողից ավելի ցածր սակագներ կիրառելու հարցերը, ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման համար երկու երկրների միջև փոխանակվող թույլտվությունների քանակի ավելացման և այլ հարցերով երկու երկրների կառավարությունների միջև կնքված միջպետական համաձայնագրով նախատեսված Խառը հանձնաժողովի նիստ անցկացնել, ինչպես նաև թուրքմենական կողմը պատրաստակամություն է հայտնել ավելացնել վերոնշյալ թույլտվությունների քանակը մինչև Խառը հանձնաժողովի նիստ անցկացնելը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով ԵՄ Global Gateway հարթակում ներգրավման, Կենտրոնական Ասիայի երկրների հետ համագործակցությունը խթանելու, ԵՄ կողմի ֆինանսավորվող նախագծերից դուրս չմնալու կարևորությունը, ինչպես նաև տարեսկզբին Բրյուսելում տեղի ունեցած ԵՄ-Կենտրոնական Ասիա Փոխկապակցվածության ներդրողների ֆորումի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները, անհրաժեշտ է շարունակել մասնակցությունը ԵՄ Global Gateway հարթակի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.10.2024թ.